

Քյուն.

1/ Բորուիթաշի գավաթը պատվիրողները, այսինքն՝ Եռեդրի V գամբանաբլուրում թաղված մ.թ.ա. XVIII - XVII դդ. իշխանավորների, հնդեվրոպական դիցաբանության կրողներ են եղել:

2/ ,,նյանը-մահ-հարություն,, դիցաբանական պարենրաշրջանի նախահնդեվրոպական առասպելներից մեկը պահպանվել է ,,Գրիմների ասքում,,:

Կ.Ռ.ՔԱՐՔՅԱՆ

ՀԱԽ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԵՆԱԿՈՐԾ ՍՐԹԻՉՆԵՐԻ ԻՆՈՒՔԱԳՐԱՆ ՓՈՐՁ
/Ըստ ՀԱԹ-ի հավաքածուի/

1. Հայաստանի ազգագրության պետական թանգարանի գործիվածքի հավաքածուն քնդդկում է ժողովրդական գեղարվեստական գործիվածքի տարբեր տեսակներին հազարավոր նմուշներ՝ գորգեր, կարպետներ, գորգագործ ու կարպետագործ այլ կենցաղային առարկաներ, ասեղնագործության ու ժանյակների նմուշներ: Հատուկ ուշադրության են արժանի սրբիչները, որոնք ասեղնագործ մյուս առարկաներին հետ միասին ներկայացնում են Հայաստանի տարբեր շրջանների XIX դ. և XX դարասկզբի ասեղնագործական արվեստը: Հատկապես հարուստ են ներկայացված Արևմտյան Հայաստանի ասեղնագործական կենտրոններում ստեղծված սրբիչները:

2. Հայաստանի տարբեր պատմա-ազգագրական շրջաններում սրբիչների համար օգտագործել են տարբեր գործիվածքներ, կարատեսակներ, թելեր: Գերապատվությունը տալով տարբեր հյուսվածքի սպիտակ բամբակե գործիվածքներին, գործածել են նաև վուշե գործիվածքներ: Սրբիչներն ասեղնագործում էին գերազանցապես մետաքսե, նրբեմն նաև բամբակե թելերով՝ ոսկեթել, արծաթաթել, մետաղալար-մետաղաթելների գուգակցմամբ: Կիրառված են այսպես կոչված երկկողմանի կարատեսակները՝ վանի կարք, մաղալարք, համրովի և երկերես հարթակարք, թելքաշք և այլ կարեր, որոնք հավասարապես դիտելի են երկու կողմից էլ:

3. Սրբիչները լայն կիրառություն են ունեցել հայ ժողովրդի կենցաղում: Սոսրյա քնտանեկան հարաբերություններում դրանք հասարակ, համախ կոպիտ անյնագործական արտադրանք են եղել, որոնց քնդդղ է համեմատաբար պարզ հարդարանքը: Անհամեմատ նուրբ և

Մոխ են հատուկ հյուրասիրութիւններ, տոների ու ծեսերի համար նախատեսված սրբիչները՝ կնուկներ, հարսանիքի /փեսայի ուսին կապված սրբիչը՝ ուս-կապը/, հյուրերի առաջ բերմող սկուտեղը բռնելու սրբիչը, հյուրերի լվացվելուց հետո զործածվող սրբիչները և այլն: Սրբիչները եղել են նաև եկեղեցական սպասրի անբաժանելի մաս և նկատելի տեղ են գրավել եկեղեցական արարողութիւնների ժամանակ:

4. Հավաքածուի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ հայկական սրբիչների գեղագարդման համակարգում գերակշռում են բուսական զարդանախշերը, որոնց մեջ **հատկապես** առանձնատուր հն ծաղկաճախշերը, համախ ներկայացված կենաց ծառերի հետ միասին: Վերջիններս հանդես են գալիս նաև առանձին՝ որպես սրբիչների եզրագոտիներ՝ հիմնական զարդապատկեր: Բուսական զարդանախշերի թվում հիշատակելի են գանգալն պտուղների /հիմնականում տանձ, խնձոր, նուր և այլն/ պատկերները: Տարածված է եղել նաև երկրաչափական զարդանախշը, որը հանդիպում է ինչպես առանձին, այնպես էլ բուսական զարդանախշերի գուգորդմամբ: Ավելի հազվադեպ են կենդանական, առավել ևս մարդկային պատկերները: Հայաստանի տարբեր պատմա-ագագարական շրջանների սրբիչներն ունեն իրենց բնորոշ զարդանախշային համակարգը, որը փոփոխվում է՝ քստ տվյալ սրբիչի կիրառական նշանակութան: Յուրաքանչյուր շրջանի սրբիչի զարդանախշն արտահայտելով տվյալ շրջանի բնակչութան գեղագիտական քննադատմանը, մաշակը, մեծ նմանութիւններ ունի տվյալ պատմա-ագագարական շրջանի գեղագարդման արվեստի այլ մյուսներին, ոճական առանձնահատկութիւններին և գունային լուծումներին:

5. Այդպիսով, ելնելով վերոհիշյալից, կարելի է եզրակացնել, որ սրբիչները ժողովրդի կենցաղում ունեցել են ինչպես ամենօրյա, այնպես էլ ծիսական նշանակութիւն: Պարզվում է նաև, որ, գործածման **ուրուից** կախված, սրբիչներն ունեցել են համապատասխան գեղագարդում, որոնք այս կամ այն չափով աղերսվել են կենցաղի տվյալ բնագավառի ծեսի հետ կապված ժողովրդական պատկերացումներին:

ՀԱՊԹ-ի ասեղնագործ սրբիչների հավաքածուն հնարավորութիւն է բնծեղում վեր հանել նշված առանձնահատկութիւնները, որոշակի գաղափար կազմել հայկական սրբիչների մասին և այդ առումով նշված հարցադրումները ուսումնասիրման կարևոր աղբյուր է: